ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» հունիսի 2015 թվական N 87–Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑԻ N 2 ՇԵՆՔԻ N 36 ԲՆԱԿԱՐԱՆԸ «ԲԱՐՁՐԱԲԵՐԴ» ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, նկատի ունենալով «Բարձրաբերդ» համատիրության գրավոր խնդրանքը (քաղաքապետարանում մուտքագրված 2015 թվականի մայիսի 5-ին N 4991 թվագրմամբ)՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (սեփականության իրավունքի վկայական 1052014) Մովսես Խորենացու փողոց N 2 շենքի 66,79 (վաթսունվեց ամբողջ յոթանասունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով N 36 բնակարանը 5 (հինգ) տարի ժամկետով անհատույց օգտագործման տրամադրել «Բարձրաբերդ» համատիրությանը՝ որպես աշխատասենյակ օգտագործելու նպատակով:
2. Օրենքով սահմանված կարգով «Բարձրաբերդ» համատիրության հետ կնքել սույն որոշման 1-ին կետում նշված ամշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիր (պատասխանատու՝ Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային գույքի հաշվառման և կառավարման բաժին):

Կողմ (14) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա.Ադամյան
Ա.Բաղրամյան
Ա.Գրիգորյան
Վ.Եդիգարյան
Հ.Խաչատրյան
Հ.Կարապետյան
Տ.Հովհաննիսյան
Վ. Հունանյան
Ն.Մեսրոպյան
Ռ.Մխիթարյան
Վ.Շիրինյան
Ե.Պողոսյան
Մ.Սահակյան
Տ. Փանոսյան

Ս. Բ Ա Լ Ա Ս Ա Ն Յ Ա Ն

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ռ. ԱՍԱՏՐՅԱՆ**

15 հունիսի 2015թ.
ք.Գյումրի